

ՀՈՒՐԵԼՅԱՆՆԵՐ JUBILEE



ՀՐԱԶ ԲԱՐԹԻԿՅԱՆ

**ՊԱՏՄԱԲԱՆ, ԲՅՈՒՉԱՆԴԱԳԵՏ,
ՀԱՅԱԳԵՏ ԵՎ ՊԱՐԶԱՊԵՍ
ՀԻԱՍՔԱՆԶ ՄԱՐԴ
(ԾՆՆԴՅԱՆ 95-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)**

*«Գործք առանց նշանաց յերկինս քանի, բայց
նշանք առանց գործոց, ոչ կարեն ի նախադրունս
արքայութեանն ումեք առաջնորդել. նշանք ոչ ապրեցու-
ցանեն ի պատժոյ, իսկ գործք ոչ կարաւորին փրկողաց»¹:*

Հուլիսի 7-ին ակադեմիկոս, պատմաբան, բյուզանդագետ, հայագետ Հրաչ Բարթիկյանը կդառնար 95 տարեկան²: Արդեն տասնմեկ տարի է, որ նրա բացակայությունն զգացվում է Հայաստանի (և ոչ միայն Հայաստանի) ակադեմիական կյանքում: Հիրավի, վիթխարի է նրա ներդրումն ինչպես հայագիտության, այնպես էլ համաշխարհային բյուզանդագիտության մեջ:

¹ ՄՄ թիվ 1879 ձեռ., 358բ–359ա: Այս տողերը վերցված են «Գիրք պատճառաց»-ից՝ «Յոհաննու Ոսկեբերանի տեսություն վասն Գործոցն Առաքելոցն» նախակրթությունից, որում հեղինակը, խոսելով Գործք Առաքելոց նորկտակարանյան գրքի մասին, բացատրում է, թե ինչո՞ւ այն չի կոչվել *Նշանք Առաքելոց* կամ *Հրաշք Առաքելոց*: Հենց այս հոդվածի համար ընտրված սույն բնաբանը, ինչպես մեզ է թվում, բնութագրում է ոչ միայն Քրիստոսի, այլև «գիտության առաքյալների» (եթե կարելի է այս եզրով սահմանել գիտության նվիրյալ մշակներին) գործունեության բուն իմաստը:

² Փաստորեն սա Հրաչ Բարթիկյանի երկրորդ հոբելյանն է, որը նշվում է նրա բացակայությամբ: Հր. Բարթիկյանի 90-ամյակը հենց նրա ծննդյան օրը տոնվեց ՀՀ ԳԱ Պատմության ինստիտուտում, տնօրեն Աշոտ Մելքոնյանի ջանքերով, որը թեև մշտապես առանց խտրականության է վերաբերել իր տնօրինած ինստիտուտի աշխատողներին, սակայն ընդգծված հատուկ վերաբերմունք է ունեցել (և կարևորն ունի) ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանի նկատմամբ:

Հրաչ Բարթիկյան Պատմաբան, բյուզանդագետ, հայագետ...

Հրաչ Բարթիկյանի կենսագրականի, ուսումնառության և գիտական ճանապարհի մասին բազմիցս է գրվել: Կան նաև աշխատանքների մատենագիտական ցանկեր³: Այսօր այդ տեղեկությունները հասանելի են բոլորին՝ շնորհիվ համացանց կոչված վիրտուալ եղելությանը: Հրաչ Բարթիկյանի մասին, սակայն, գրվել է և՛ շատ, և՛ քիչ. շատ՝ որովհետև ամեն օր զգացվում է նրա բացակայությունը և ոչ միայն հարազատների ու ընկերների համար, այլև մասնագետների, որոնք լայնորեն օգտվում են գիտնականի աշխատություններից՝ մեջբերելով նրա փայլուն մտքերը, և քիչ՝ քանզի դեռևս շատ գրվելիք ու հետազոտվելիք հարցեր կան, որոնց լուսաբանման համար Հրաչ Բարթիկյանի գործերը երբեմն պարզապես անփոխարինելի են: Այսու, փոքր ակնարկով կներկայացվեն ոչ թե նրա աշխատանքները, ստացած պատվո նշանները և կոչումները, այլ այն բացը և վերաբժնորումը, որն այսօր էլ սուր կերպով զգում են շատ և շատ գիտնականներ: Մեկնաբանելով, սակայն, «վերաբժնորում» բառը, պետք է դիմենք Գրիգոր Տաթևացուն՝ նշելով, որ «օրհնելն՝ մեծին

³ Հարկ է նշել, որ այդ ցանկերում բացակայում են Հրաչ Բարթիկյանին նվիրված երկու հոդված. Է. Մ. Շիրինյան, «Պատիվ և հարգանք (*Τιμή τε καὶ χάρις*)», Տարեգիրք Բ, ԵՊՀ Աստվածաբանության ֆ-տ, Երևան, 2007, էջ 46-57 (այսուհետ՝ Շիրինյան, Պատիվ և հարգանք): Манеа-Эрна Ширинян, De Viris Illustribus: сравнительное жизнеописание двух славных мужей – Грача Михайловича Бартияна и Гюнтера Христиана Хансена Памяти Гр.М. Бартияна и Гюнтера Христиана Хансена, Византийский Временник, 100 (2016), pp. 361-365 (այսուհետ՝ Ширинян, De Viris Illustribus): Դրանցից առաջինը նվիրված էր անվանի բյուզանդագետի 80-ամյակին և լույս էր ընծայվել իր կենդանության օրոք: «Պատիվ և հարգանք» վերնագիրը յուրօրինակ բանաձևի վերտառություն է, որը կոչված էր «մարդու արժանիքները նշելու և նրա գործունեությունը բարձր գնահատելու համար»... «Փառքը, երբ անձն ինքն իրեն զգում է փառավորված, իսկ պատիվը, երբ ուրիշներից, արտաքուստ էլ է ստանում փառքի արտահայտությունները» - ասում է Գրիգոր Տաթևացին Սաղմոսների մեկնությունում: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Սաղմոսաց, աշխ. Ա. Քյոշկերյանի, Երևան 1993, էջ 13» (տե՛ս Շիրինյան, Պատիվ և հարգանք, էջ 46): Եվ որովհետև «Տարեգիրք» կոչվող ամսագիրը բավական անտեսված է ընթերցողի կողմից ու շատ քչերն են դրան ծանոթ (ինչպես ասաց ինքը՝ Հրաչ Բարթիկյանը. «Եթե չնվիրեիր այս համարը երբեք պիտի չիմանայի այս հոդվածի մասին»), ինչպես նաև որովհետև այդ հոդվածը նրա առանձնահատուկ հավանությանն էր արժանացել՝ այստեղ թույլ կտանք փոքր-ինչ լայնածավալ մեջբերումներ անել դրանից: Հետմահու լույս տեսած երկրորդ հոդվածը տպագրվել է հեղինակավոր Византийский Временник-ի հոբելյանական համարում և կազմված է հին ժամանակներին բնորոշ (օրինակ՝ Պլուտարքոս, Սվետոնիոս) նշանավոր հույն և հռոմեացի առաքինի այրերին նվիրվող «Ձուգահեռ վարքեր»-ի՝ համեմատական կենսագրությունների ժանրի ներքո. այդտեղ երկրորդ «առաքինի այրը» գերմանական հայտնի «Բիբլիոթեկա Թեոբներիանայի» (Bibliotheca Teubneriana) գլխավոր խմբագիր Գյունթեր Քրիստիան Հանսենն է:

է զնուազն ըստ Պօղոսի. «Ամենայն իրօք նուազն ի լաւ է անտի օրհնեսցի» (Եբր. Է 7), իսկ գովելն՝ նուազին է զմեծն, իսկ բարեբանելն՝ հաւասարիցն»⁴:

Հրաչ Բարթիկյան գիտնականի թերևս ամենացայտուն և կարևոր առանձնահատկություններից էր նրա՝ բյուզանդագետ լինելը: Հայտնի է, որ բյուզանդագիտական հետազոտություններն առաջնակարգ նշանակություն ունեն ոչ միայն հայ միջնադարագիտության մեջ: Միևնույն ժամանակ, բյուզանդագիտական ուսումնասիրությունների համար ոչ պակաս կարևոր են նաև հայկական աղբյուրներն ու հայագիտական հետազոտությունները: Զարմանալիորեն, սակայն, հայ հումանիտար գիտության մեջ բյուզանդագետները շատ քիչ էին թե՛ նախկինում և թե՛ այսօր: Հետաքրքրական է, որ հայոց գիտությունը 1927 թ. հարստացավ ոչ միայն մեկ ապագա բյուզանդագետով, այլև նույն տարում, այն էլ շատ խորհրդանշական մի օր՝ հունվարի 6-ին, Թիֆլիսում ծնվեց մեր բյուզանդագիտության մեկ այլ սյուններից մեկը՝ Կարեն Յուզբաշյանը: Նրանց գիտական կենսագրականներում շատ ընդհանրություններ կան, սակայն գլխավորն այն է, որ երկուսն էլ եղել են Լենինգրադյան «դպրոցի» սաներ, որոնց վրա մեծ ազդեցություն է ունեցել Հովսեփ Օրբելին, որը եղել է նաև Հրաչ Բարթիկյանի թեկնածուական ատենախոսության ղեկավարը: Այս երկու գիտնականներն էլ ստացել են մասնագիտական կրթություն, այլ ոչ թե առնչվել են բյուզանդագիտությանը հայագիտական հարցերի շրջանակում, ինչն ավելի հաճախակի երևույթ է մեզանում⁵: Սա հասկանալի է, քանի որ հայագիտության և բյուզանդագիտության փոխադարձ առնչությունները վերաբերում են տարբեր բնագավառների՝ պատմությանը, աղբյուրագիտությանը, աստվածաբանությանը, գրականությանը, փիլիսոփայությանը, ճարտարապետությանը, երաժշտությանը, բժշկության պատմությանը, աշխարհագրությանը, մանրանկարչությանը և, ընդհանրապես, արվեստի ու մշակույթի ոլորտներին: Այսուհանդերձ, մեզանում հիմնական ուշադրությունը սևեռված է հայագիտական նյութի վրա և շատ հազվադեպ է, որ բյուզանդագիտական նյութը ներկայացված է հայկականին հավասարաչափ, ինչի մասին երազում էր և բազմիցս խոսում հենց Հրաչ Բարթիկյանն իր ելույթներում:

⁴ Գրիգոր Տաթևացի, նշվ. աշխ., էջ 12, հմմտ. Շիրինյան, Պատիվ և հարգանք, էջ 57:

⁵ Այսօր Հայաստանում գրեթե չկան բյուզանդագիտական կրթություն ստացած մասնագետներ. 1980-ական թվականներին այդ մասնագիտացումը ստացած երեք հոգուց (Ելենա Զաղացասյանը, Իրինա Ուսաչովան, Է.Մ. Շիրինյանը) երկուսը (առաջին երկուսը)՝ Հայաստանում չեն և կարծես թե չեն զբաղվում բյուզանդագիտությամբ:

Հրաչ Բարթիկյան Պատմաբան, բյուզանդագետ, հայագետ...

Այս հանգամանքը, բացի մասնագետների պակասից, իհարկե ունի այլ բացատրություններ ևս, այն է՝ դարեր շարունակ Հայոց պատմության համար Բյուզանդիայի խաղացած բացասական դերի պատճառով բյուզանդագիտության նկատմամբ մեզանում եղած վերաբերմունքը միանշանակ չէ: Եղել են և, զարմանալիորեն, դեռևս կան մասնագետներ, որոնք հենց նշված դերի պատճառով Ժխտական վերաբերմունք ունեն խնդրո առարկա գիտության վերաբերյալ: Մի՞թե մանկամտություն չէ չուսումնասիրել արդեն իսկ գոյություն չունեցող, բայց ժամանակին մեր պատմության հետ այդքան սերտաճած կայսրության վերաբերող հարցերը: Չէ՞ որ, եթե դու այդ ոլորտից բացակայում ես, այն լրացնում են պատմությունը խեղաթյուրողները և միտումնավոր միայն վատ անցքերը տեսնողները: Ավելին, հաճախ անգամ լուրջ բյուզանդագետներ կարող են շատ քննական և անգամ քննադատական ոգով մոտենալ հարցին: Օրինակ, հեղինակավոր բյուզանդագետ Ժոզեֆ Լորանը, անդրադառնալով հայ-բյուզանդական հարաբերություններին, առանց վարանելու խոսում է Բյուզանդիոնի դեմ հայկական «դաւաճանության մասին»: Լևոն Զեքիյանն իր հոդվածներից մեկում շատ տեղին ու արդարացի հարցադրումով էր պատասխանել այդ գիտնականին՝ «թէ ո՛վ որո՞ւն դաւաճանած է»: Իհարկե պետք է աչալուրջ լինել և միշտ ստուգել ասվածն ու ասողին, միշտ անկողմնակալ, քննադատական եւ սառը մոտեցումով ընկալել կամ արտահայտել խնդիրը, առանց դոգմատիկ և ազգայնամոլական դիրքորոշումների:

Հարցն էլ ավելի է բարդանում այն հանգամանքով, որ թե՛ խորհրդային շրջանում և թե՛ այսօր բյուզանդագիտության մեջ որոշակի քաղաքական միտում է նկատվում՝ անտեսելու հայկական հարուստ նյութը: Խորհրդային տարիներին, որպես կանոն, առավելությունը և նախապատվությունը միշտ տրվում էր Ռուսաստանի հետ առնչվող նյութին: Ծագումով ոչ հայ բյուզանդագետները շատ քիչ էին անդրադառնում հայկական աղբյուրներին: Զարմանալի չէ, որ հայտնի բյուզանդագետ Ա. Կաթդանը հայերին նվիրված իր մենագրությունը հրատարակեց Երևանում:

Այսպիսի վերաբերմունքը որոշ չափով նկատելի է նաև եվրոպական և ամերիկյան բյուզանդագետների շրջանում, որի պատճառով էլ հայկական նյութը հաճախ դուրս է մնում միջազգային գիտական համատեքստից: Այս պարագայում, մասնավորապես վերջերս, առաջնակարգ, և կարելի է ասել, անգամ գլխավորող դեր է ընձեռվում Թուրքիայի մասնագետներին, ինչը նախկինում հույն բյուզանդագետների մենաշնորհն էր: Ոլորտի քաղաքականացված լինելը պարզ երևում է նաև Բյուզանդագիտական միջազգային կոնգ-

Շիրինյան Է.-Մ., Թորոսյան Վ.

րեսների կազմակերպման ժամանակ, որոնք տեղի են ունենում 5 տարին մեկ անգամ (օրինակ՝ 2006 թ. օգոստոսի 21–26-ը Լոնդոնում կայացած 21-րդ կոնգրեսը մասնակցության համար սահմանել էր դրամաշնորհներ միայն Թուրքիայի և Վրաստանի գիտնականների համար): Դրությունը նույնն է նաև մեր օրերում. սույն թվականի օգոստոսին Վենետիկում կայանալիք Բյուզանդագիտական 24-րդ կոնգրեսի չորս պլենար խոսնակներից երեքը Թուրքիայից են⁶:

Հետխորհրդային շրջանում հայ բյուզանդագետները կամ բյուզանդագիտության վերաբերյալ ուսումնասիրություն կատարող հայագետները հաճախ չեն մասնակցել այդ կոնգրեսներին, ինչը, կարծում ենք, մեծ վնաս է բերել ոչ միայն մեր գիտությանը, այլև արտաքին քաղաքականությանը: Իրադրության այսպիսի զարգացումը պայմանավորված չէր միայն ֆինանսական հանգամանքներով, դրա պատճառներից էին ճիշտ ժամանակին չկողմնորոշվելն ու բյուզանդագիտական ընդհանուր կառույցին չանդամակցելը:

Ահա այս իրադրությունը դրդեց հայաստանյան բյուզանդագետներին՝ միավորելու իրենց գիտական ներուժը և 2003 թ. պ.գ.դ. Մ. Է. Շիրինյանի նախաձեռնությամբ հիմնել Հայկական ազգային բյուզանդագիտական կոմիտեն, որի առաջին նախագահը եղել է ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանը (փոխնախագահ՝ պ.գ.դ. Մ. Է. Շիրինյան, գիտ. քարտուղար՝ ար.գ.դ. Ա. Արևշատյան): 2006 թ. Լոնդոնում կայացավ 21-րդ կոնգրեսը, որտեղ Հայաստանի Կոմիտեն առաջին անգամ մասնակցեց որպես Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող կառույց՝ իր հետ տանելով Հայկական ազգային բյուզանդագիտական կոմիտեի նախագահ Հրաչ Բարթիկյանի ուղերձը: Այսու՝ Կոմիտեին հնարավորություն ընձեռվեց դառնալ Բյուզանդագիտական միջազգային ընկերության լիարժեք անդամ ու մաս կազմել բյուզանդագետների միջազգային ընտանիքի:

Ասվածից կարելի է պատկերացնել, թե որքան դժվար է եղել Բարթիկյան-բյուզանդագետին՝ երբեք չդավաճանել իր հավատամքին և գիտական խղճին այն պարագայում, երբ նրա ուսումնասիրությունների ծանրակշիռ մասը վերաբերում է հայ-բյուզանդական հարաբերությունների պատմությանը:

Նրա հետազոտություններին բնորոշ է բյուզանդական աղբյուրների լայնածավալ ներգրավումը: Հենց նրա շնորհիվ է, որ հին հունարենից հայերեն թարգմանվեցին և «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մա-

⁶ Բյուզանդագիտական 24-րդ կոնգրեսի պաշտոնական կայքն է՝ <https://byzcongress2022.org/news/>:

Հրաչ Բարթիկյան Պատմաբան, բյուզանդագետ, հայագետ...

տենաշարի «Բյուզանդական աղբյուրներ» շարքով հրատարակվեցին Պրոկոպիոս Կեսարացու (1967), Կոստանդին Ծիրանաձնի (1970), Հովհաննես Սկիլիցեսի (1979), Թեոփանես Խոստովանողի (1983), Թեոփանեսի Շարունակողի (1990) և Միքայել Ատտալիատեսի (2015) աշխատությունները: Նրա թարգմանությունների մեջ հույժ կարևոր նշանակություն ունի նաև Կեսարիայի մետրոպոլիտ Պարթենիոս Աթենացու՝ Երուսաղեմի Սուրբ վայրերի պատկանելության շուրջ հայ և հունադավան եկեղեցիների տարաձայնություններին վերաբերող «Պատմություն հայոց և հունաց տարաձայնության» (2008 թ.) երկը:

Այս հրատարակությունների միջոցով հայագիտությանն առավել հասու դարձան բյուզանդական բազմաթիվ արժեքավոր աղբյուրներ, որոնք առավել հարստացրեցին հայ միջնադարագիտության սկզբնաղբյուրային հենքը: Դրանց շարքում չափազանց կարևոր են Ագաթանգեղոսի երկի հին հունարեն խմբագրությունը, «Narratio de rebus Armeniae» հայ-քաղկեդոնական գործը և հայ-բյուզանդական հարաբերություններին վերաբերող բազմաթիվ հույժ արժեքավոր վավերագրեր:

Միևնույն ժամանակ հույն ընթերցողը, շնորհիվ Բարթիկյանի հունարեն աշխատությունների՝ «Բյուզանդիան հայկական աղբյուրներում», «Բյուզանդիա և Հայաստան», «Գավրասների բյուզանդական ազնվականության ընտանիքը», հնարավորություն ստացավ ավելի լավ ծանոթանալու հայոց պատմությանը, հայերի և հույների միջև դարավոր փոխհարաբերություններին:

Ճիշտ է, ականավոր բյուզանդագետի ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում էին միջնադարին, սակայն հունարենի իր փայլուն իմացությունը նա ծառայեցնում էր նաև հայոց նորագույն ժամանակների պատմության ուսումնասիրությանը: Այդ շարքից է Հայաստանի Առաջին հանրապետության տարիների հայ-հունական հարաբերություններին առնչվող հունարեն արխիվային վավերագրերի հայերեն թարգմանությունը, ինչպես նաև հետմահու լույս տեսած Իոաննիս Կ. Խասիոտիսի «Պատմական ավանդույթ և քաղաքական իրապաշտություն. հունական քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ (1876–1996)» (հունարեն բնագրից թարգմանությունը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչ Մ. Բարթիկյանի) աշխատությունը, որում ներկայացվում է Հայկական հարցի վերաբերյալ 1876–1996 թթ. հունական քաղաքականությունը: Նրա մեծարժեք թարգմանությունները, որոնք, հիրավի, անգնահատելի ներդրում են հայագիտության մեջ, սոսկ թարգմանություններ չեն,

այլև գիտական հարուստ ծանոթագրություններ պարունակող հետազոտություններ:

Հրաչ Բարթիկյանի առաջին աշխատություններն առնչվել են պավլիկյան աղանդավորական շարժմանը: Նա առանձին ուսումնասիրության նյութ դարձրեց շարժմանը վերաբերող թե՛ հայկական և թե՛ բյուզանդական աղբյուրները՝ նրանց վերաբերյալ քննությունը կատարելով իր թեկնածուական ատենախոսությունում: Նրա իսկ աշխատանքների շնորհիվ հիմնավորապես պարզաբանվեցին պավլիկյան շարժմանը, հատկապես՝ դրա սկզբնավորման ժամանակին, անվան ծագմանը, համայնքին վերաբերող հարցերը: Պավլիկյաններին առնչվող բյուզանդական աղբյուրներից Հրաչ Բարթիկյանի կատարած հայերեն հատվածական թարգմանությունները մեծապես ընդլայնեցին այդ շարժման պատմության աղբյուրները՝ նոր հնարավորություններ ստեղծելով հետագա ուսումնասիրությունների համար:

Հայ միջնադարագիտության համար հիմնարար նշանակություն ունեն Հայաստանի նկատմամբ Բյուզանդիայի վարած քաղաքականության, դրա բացասական և դրական ազդեցության, Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության, ինչպես նաև հայ-բյուզանդական եկեղեցական առնչությունների վերաբերյալ Հրաչ Բարթիկյանի հոդվածները: Դրանցից շատերն օժտված են նշյալ թեմաներին վերաբերող բյուզանդական վավերագրերի (նամակներ, թղթեր և այլն) հայերեն թարգմանություններով, որոնք բացառիկ կարևորություն են հաղորդում այդ ուսումնասիրություններին: Նրա հետազոտություններին, առանց բացառության, բնորոշ են գիտականության և տեսականների հիմնավորվածության բարձր աստիճանը, և, որ ամենակարևորն է՝ գիտական նորոյթի առկայությունը:

Ամփոփելով Հրաչ Բարթիկյանի մասին մեր խոսքը՝ ևս մեկ անգամ նշենք, որ նրա գրեթե բոլոր աշխատություններում ցայտունորեն համադրված են խորագետ պատմաբանի և բանասերի գիտելիքն ու հմտությունը, այլ խոսքով՝ նա առաջնորդվել է հետևյալ համոզմամբ. «Այն պատմաբանը, որն անտեսում է բանասիրությունը, սավառնում է օդում, իսկ պատմությանն անտեղյակ բանասերը՝ գետնին է կպած»⁷:

Հարկ է նաև նշել, որ բյուզանդագիտության բնագավառում Հրաչ Բարթիկյանի արձանագրած ձեռքբերումներին մեծապես նպաստել է նրա հունարենի հոյակապ իմացությունը. նա տիրապետում էր հին հունարենին, իսկ նո-

⁷ Ширинян, De Viris Illustribus, էջ 361.

Հրաչ Բարթիկյան Պատմաբան, բյուզանդագետ, հայագետ...

որը՝ նրա մայրենի լեզուն էր (քանի որ, նա ծնվել և ապրել է Հունաստանում գրեթե քսան տարի):

Իբրև գիտության անխոնջ մշակ՝ նա մինչև իր կյանքի վերջին օրերը նվիրվեց գիտությանը՝ ավարտին հասցնելով «Հայերը Բյուզանդիայում» կոթողային աշխատությունը, որը հրատարակության պատրաստման փուլում է:

Գլուխը համեստորեն թեքած՝ նա ամեն օր անցնում էր հարյուրավոր մարդկանց կողքով, ովքեր նույնիսկ չէին էլ ենթադրում, թե ինչ մեծ գիտնական անցավ իրենց կողքով: Երբ Հունաստանում լույս տեսած նրա մի գրքի վերաբերյալ գրված գրախոսականում Հրաչ Բարթիկյանին անվանել էին κορυφαίος⁸, ինչը, հասկանալի պատճառներով, չափազանց շոյել էր նրա ինքնասիրությունը, նա դրա մասին ասաց շուրջով, կարծես թե ամաչելով, որ իր հետ նման բան է պատահել: Միննույն ժամանակ Հրաչ Բարթիկյանը շատ սկզբունքային էր և եթե հարցը վերաբերեր լուրջ գիտական զանցանքի, ապա նա կարող էր անճանաչելի դառնալ:

Հրաչ Բարթիկյանը մահացավ շատ խաղաղ (ինչը ևս երանություն է և թերևս տրված է առաքինի մարդկանց). նա պարզապես մի օր չարթնացավ և, ինչպես պատմում էին նրա դստերը, խաղաղ պառկած էր անկողնում՝ փոքր-ինչ գլուխը թեքած, ինչն այնքան բնորոշ էր այդ զարմանալի մարդուն և հզոր գիտնականին:

ԷՌՆԱ ՄԱՆԵԱ ՇԻՐԻՆՅԱՆ

*պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Մեսրոպ Մաշտոցի անվան Մարենադարան
erna.shirine@gmail.com*

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ

*պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
Մեսրոպ Մաշտոցի անվան Մարենադարան
vahetorosyan3@gmail.com*

⁸ Հունարեն այս բառով, որը ծագում է κορυφή-ից (գլխի վերևի մասը), ընդունված է սահմանել գիտության և արվեստի ականավոր գործիչներին՝ տաղանդավոր մարդկանց, որոնք առաջատար դեր են խաղում իրենց ոլորտում: Այս բնութագրումը հույները հազվադեպ են օգտագործում, հատկապես օտարազգի գիտնականին բնորոշելու համար, այնպես որ տվյալ պարագայում իհարկե դա շատ հուզիչ և գնահատելի է: